



# ՀԱՆՐԱՔԻՏԱԿ

## ԼՐԱԳԻՐ

### Գրական եւ Գիտական

Encyclopédie مجموعة علوم

ԽՄԲԱԳՐԱՊԵՏ - ՏՆՕՐԻՆ

Г. О О Л. О. С

Գ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 63

1899 ՅՈՒՆԻՍ 19

Ամեն տեղի համար Տարեկան կանխիկ **50** դանեկան, վեցամսեայ **26**, իսկ եռամսեայ, **13** դանեկան: Օտար երկրաց համար տարեկան կանխիկ **15** ֆրանկ: Թղթասարի ծախսը խմբագրութեան կը վերաբերի: Հասը **40** փարայ: Դաւառներէ բօսքի բուլ ալ կ'ընդունուի **100** փրուշի եղ **105** փրուշ:

### ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

- Ա. Յ. Ալեքեան. — Պատմական ակնարկ մը Յունիս 24ին ըստ իւր ընտրութեան մը առթիւ:
- Մ. Բ. — Մատենադիտական. — Հայր Արսէն Ղազիկեան ի Մխիթարեանց:
- Կ. Բ. — Տոգտ. Ն. Տաղաւարեան և իր հրատարակած «Եննդական Գործարանք» անուն գրքէն նմոշներ:
- Ղ. Բ. — Հարտարարութեան ակնարկ. Ներկարարութիւն:
- Ղ. Բ. — Անասնաբուժական:
- Թերթոն Հանրագիտակի. — Ուղեւորութիւն երկրիս կեդրոնը (Ժիւլ Վերն)
- Թղթակցութիւն, Ազգ եւ տղն:



### Հատը 40 փարայ

Տպագր. Գ. ԴԱՅՍԵՐԵԱՆ  
Կ. Պոլիս, Պապ-Ալի ճատտէսի, Թիւ 4

Ստացած ենք Տիար Յ. Թումանյանի ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ անուն գրքոյը, որ իր տեսակին մէջ ունի գնահատելի առաւելութիւններ, զորս արդէն ճապուկ ոճով ի վեր հանած է թերթիա Մատենագիտականին յարգոյ աշխատակիցը:

Գինն է 50 կոպէկ = 6 ղրշ. Թիֆլիզի գրավաճառներուն քով: Ամէն կողմի հայ ընթերցողներու, ընթերցատուններու և թանգարաններու յանձնարարելի:

ՄԱՆԻՍԱ. — Գեղամ էֆ. Կ. Ունճեան. — Ստացած ենք նամակիդ. կը հրատարակենք: ՍԵՐԱՍՏԻԱ. — Գործակալ. — Ձեր նամակով հետեւեալը կը գրէք մեզ. «Ներելի՞ է արդեօք խնդրել որ բարեհաճիք տեղեկացնել մեզ, թէ ի՞նչ կերպով կարելի է մաքուր հայերի պատրաստել. սղքատ, օրական հացի կարօտ աղքային մը կը խնդրէ գիտնալ ասոր գաղտնիքը, որով մեծ բարերարութիւն մ'ըրած կ'ըլլաք այդ խեղճին, և ինչ. և ինչ.»: Նախ պէտք էք գիտնալ թէ, թերթիա ուղղուած հարցումներէն անոնց կը պատասխանուին միայն՝ որոնք կ'ուղղուին բաժանորդներու կողմէ, և թէ մեր ծրագրի սահմաններէն դուրս չեն: Բայց քանի որ կ'ըսէք թէ՝ աղքատ արհեստաւորի մը համար է, հաճութեամբ կը պատասխանենք, եթէ՝ այդ պատճառաւ տեղի ունենալիք ծախքը՝ որ 25 ֆռանքի չափ է, կանխաւ ապահովուի:

ԻԶՄԻՏ. — Գործակալ. — Թերթ կը ղրկենք նոր բաժանորդներուն: Ուղուած պակաս թիւերը ճշդ եցէք: Վարդի իւզի պատրաստութեան վրայ անցեալ տարի երկարօրէն գրած ենք արդէն:

ՊԱՐՏԻԶԱԿ. — Ն. Փափագեան էֆ. — Թերթերը կը ղրկենք Ձեր նոր հասցէին. վաղարշակ էֆ. ի 53, 54, 55 պակաս թիւերը այս թղթատարով: Այո՛, դրամը կրնաք վճարուի մեր Իզմիտի գործակալութեան:

ՊԱՐՏԻԶԱԿ. — Գէորգ Տ. Մեսրոպեան էֆ. — Պէտք է յօդուածին ամբողջութիւնը ղրկել որ գաղափար կազմենք. սկզբնաւորութիւնը գոհացուցիչ կ'երեւի:

ՍԻԼՎԻՐԻ. — Գործակալ. — Ստացած ենք նամակիդ. լաւ:

ԶՄԻՒՌՆԱ. — Գործակալ. — Ղրկած ենք ընկալագրեր. և մասնաւոր նամակ:

«ԳԱԼԷՏԵՐԵԱՆ ՆՈՐԱԳԾԱՅԻՆ ԴՐՈՒԹԻՒՆ» անունով այն գործը վերջապէս սկըսաւ հրատարակուիլ, որ կ'ուսուցանէ արանց և մանչ տղոց ամէն տեսակ հագուստներ, ինչպէս նաեւ ՕՍՄԱՆԵԱՆ զինւորական ու քաղաքային համազգեստներ ՁԵՒԵԼՈՒ և ԿԱՐԵԼՈՒ եղանակը, բոլորովին նորագոյն և խիստ գիւրըմբռնելի մեթոտով մը:

Գնողներուն դիւրամատչելի ըլլալու համար՝ ընդհանուր գործը բաժնուած է 3 հատորներու: Ա. հատորը կը պարունակէ բոլոր «Գալեօյով» հագուստները, իրենց ամբողջ մանրամասնութեամբ: Գործն ընտիր թղթի վրայ, գեղատիպ 200 մեծադիր էջէ և 48 վիմատիպ տախտակներէ կը բաղկանայ, շէօէ աւելի արտայայտիչ օրինակներով ու պատկերներով: Իր գերազանց առաւելութիւնն այն է որ՝ ՉԱՓԱԿԱՆ ԴՐՈՒԹԵԱՄԲ եօթ, ինն կամ տասնեւմէկ չափով ձեւել կ'ուսուցանէ ամէն կազմուածքի վրայ: Ա՛լ աւելի մատչելի ըլլալու նպատակաւ, Ա. հատորին բաժանորդագրութիւնը բացուած է միայն 3 ամսուան համար կէս օամ. ոսկի՝ կանխիկ, թղթատարի ծախքով 60 դահեկան:

Դիմել Մ. Գալէստէր, Թարագճըլար փողոց, թիւ 49, Կ. Պոլիս:

## ՇԵՐԱՄԻ ՀՈՒՆՏԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ՄԱՆՐԱԿԻՏԱԿ (MICROSCOPE)

ՄԻԼԱՆՈՑԻ ՀՌԶԱԿԱԻՈՐ ԲՈՐԻՁԲԱ ՏԱՆ

Կեդրոնատեղի

Յ. և Ա. ՊՈՒԼՈՒՏԵԱՆ Եղբայր Դեղարանը

Ի ԶՄԻՏ,

ուր կը գտնուի նաեւ շերամի հունտի պատրաստութեան համար ամէն տեսակ պիտոյք, դիւրամատչելի գներով:

Ծանօթ. — Մանրագիտական տեսակներուն և գիներուն վրայ փափաքողներու, մանրամասն տեղեկութիւն կը տրուի թղթակցութեամբ:

# ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

## ԼՐԱԳԻՐ

### Գրական եւ Գիտական

Encyclopédie معجم علوم

ԽՄԲԱԳՐԱՊԵՏ - ՏՆՕՐԷՆ

Ղ. ԲՈՂԱՑ

Գ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 63

1899 ՅՈՒՆԻՍ 19

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ ՄԸ

ՅՈՒՆԻՍ 24ԻՆ ԸԼԼԱԼԻՔ

ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԱՌԹԻԻ

Յունիս 24ին շատ օր չի մնաց։ Ամէն հետաքրքիր ազգային լարուած է, իմանալու համար թէ՝ ո՞վ պիտի ընտրուի Հայ-Հռովմէականաց պատրիարք, որ միանգամայն իր վրայ պիտի միացունէ Տանն Լիբանանու կաթողիկոսութիւնը, որ «Տանն-Կիլիկիոյ» տնտեսութեամբ որակուած է, ինչպէս Խարբերդու Հռովմէական ազգայնոց վիճակաւորը՝ «Արք-Եպիսկոպոս Անարգարայ» անուանական տնտեսութեամբ յորջորջուած։

Կ. Պոլսոյ մէջ, մեր այս համազգի եղբարց պատրիարքութիւնը՝ Կարապետ պատրիարքի օրով հաստատուած է, թէեւ ազգաբնական ձգտումը և բաժանումը՝ ասիկց շատ տարիներ առաջ գոյութիւն առած։

Սագըզ-Աղաճիկի Պատրիարքական Աթոռը՝ մինչեւ Տ. Ստեփաննոս Պետրոս Ժ. Ազարեան, հինգ թէ վեց Պատրիարքուք հազիւ ժառանգած են. սակայն Հայ-Հռովմէականաց կաթողիկոսական Աթոռն ունեցած է իր

պատմական ծագումը և յարակից սլաւադաները, և տառնեմկի մօտ Աթոռակալներ։

Լիբանանու կաթողիկոսները՝ Պետրոս Ա. Բ. Գ. և այլն անուանուած են յաջորդաբար, ինչպէս առաջին անգամ յիշեալ Աթոռին վրայ բազմող՝ Արքահայ Եպիսկոպոս Արծիւեան կամ Ծովիզեանը՝ Արքահայ-Պետրոս Ա. յիշուած է, և Բենեդիկտոս ԺԳ. Ս. Պապէն «Պալիսում» ընդունած։

1716ին Կ. Պոլսոյ Յովհաննէս-Կոլոտ պատրիարքին որոշմամբ՝ Ռուդա կամ Ռատոս կըղզին զրկուած էր այս Արքահայ Եպիսկոպոսը, ուր չորս տարի մնալէ ետեւ՝ Բերիա գացած, և անտի ի Լիբանան անցնելով, ընդ մէջ վանաց Զմմառու և ծովու, Քերիմ կամ Քուէմ (Փոքր այգի) ըսուած տեղը վանք մը շինած հաստատուած էր փառքիկ միաբանութիւն մը կազմելով, և իր յառաջացուցած աշակերտներէն վեցը՝ Եպիսկոպոս ձեռնադրելով։ Արծիւեանի հիւանդութեան ժամանակ, 700 դահեկանի գնուած է Զմմառու վանքի հողէն մաս մը, ուր հիմնարկուեր է վեց սենեակներէ բաղկացեալ պզտիկ շէնք մը, և Լիբանանու այս առաջին կաթողիկոսը 1749ին վախճանած և թաղուած է ի Քուէմ։

Յետոյ յաջորդած է Բերիացի Յովսէփեան

Յակոր Եպիսկոպոսը, Յակոր Պետրոս Բ. Կաթողիկոս անուամբ, որ նախորդին օրով առնուած Զմեռու վանքին մէջ, որա՛հ մը եւս աւելցնել տուած է: Երեք տարուան պաշտօնավարութեանը մէջ զոյգ մը եպիսկոպոս ձեռնադրելով վախճանած է ի Քռէմ: Բայց յետոյ Արծիւեան Արքայա՛մ կաթողիկոսին և թէ այն Յովսէփեան Յակոր Կաթողիկոսին մարմինները ի Հռովմ փոխադրուած և թաղուած են Ս. Պետրոսի սիւնաղարդ հրապարակին մէկ կողմը:

Լիբանանու երրորդ կաթողիկոսն է՝ Միքայէլ կաթողիկոս Բարսեղեան Բերիացի, որ Զմեռուի վանքի եկեղեցին կառուցած է՝ Վերախորհումն Ս. Աստուածածնի անուամբ, ի ձեռն ճարտարապետ Յդեսայի հայապգի Աբգարին, որ և շինած է Նահր-Քէլլի գետի կամուրջը, և տոյր մօտ գտնուած կամարակապ ջրանցքը:

Միքայէլ-Պետրոս Գ. թղ, 21 տարիներ կաթողիկոսութիւն վարած՝ և ութը եպիսկոպոսներ ձեռնադրած է: Մարմինը ամփոփուած է Զմեռուի Ս. Մարեմայ եկեղեցւոյ դասին մէջ:

Բարսեղեանին կը յաջորդէ Բարսեղ կաթողիկոս Հալէպցին, որ Զմեռու վանքն՝ նիւթապէս ընդարձակած է, բնու եպիսկոպոսի ձեռնադրութիւն մը չի կատարելով վախճանած է: Ասկից ետքը կը ժառանգէ Այնթապցի Գրիգոր կաթողիկոս, որ Զմեռու միտրանութիւնը կազմակերպած, ժառանգաւորաց վարժարանը յառաջացուցած, քից եպիսկոպոս ձեռնադրած և 24 տարիներ պաշտօնավարած է:

Լիբանանեաններու մէջ, Քիլիսցի Գրիգոր կաթողիկոս Ճէրանեան՝ անուանի է, որ թէ և փոքրահասակ (33 տարեկան) կաթողիկոսացած, բայց իր նկատմամբ բոլոր Լիբանանու ազգաբնակչութեանց մէջ, սրբութեան մեծ փայլ ու համբաւ տարածուած է, և իր վրայ յօք հրաշքներ կը պատմուին:

Ընդամէնը չորս եպիսկոպոս ձեռնադրած է: Գաղատացի Յակոր եպիսկոպոս Հօլասեան մ'ալ կայ, հազիւ 18 ամիս կաթողիկոսութիւն ըրած և երկու եպիսկոպոս ձեռնադրած:

Իսկ Գրիգոր կաթողիկոս Տէր Աստուածատուրեան, որու հին մականունն է Եղած՝

Խորխորունի, (քնիկ Բրզնիքցի լինելուն) կաթողիկոսաց շարքին մէջ՝ ազգեցիկ անունը կը վայելէ:

Սոյն կաթողիկոսը՝ իր թեմերը ընդարձակեր, եպիսկոպոսական աթոռներ աւելցուցեր, և 12 եպիսկոպոսներ ձեռնադրած է: Ունի կարգ մը երկասիրութիւններ և թարգմանութիւններ ալ: Գիտէ եղեր ինքը՝ Հայերէն, Լատիներէն, և Իտալերէն:

Պաշտօնավարութեանը մէջ՝ երկարակեցութեանը մասին, Այնթապցի Գրիգոր կաթողիկոսէն ետքը՝ այս կու գայ, զի 23 տարիներ կաթողիկոսութիւն ըրած է:

Ասոնք ամէնքն ալ Զմեռուի մայրավանքը թաղուած են կարգաւ՝ կաթողիկոսաց յառկացեալ զամբարանի շարքին մէջ:

Վերջին Գրիգոր Կաթողիկոսէն զինի, Լիբանանու վանքն՝ այլ ևս Աթոռանիստ չէր, այլ սկսած է Փոխանորդներով կառավարուիլ, ինչպէս որ ներկայիս մէջ այս պաշտօնը կը վարէ ամենայն արժանաւորութեամբ Հ. Անդրէաս վարդապետ Անդրէասեանը, որուն արդիւնաւոր կեանքը մօտերս պիտի ներկայացնեմ առանձին հրատարակութեամբ:

\* \* \*

«Տանն Լիբանանու Կաթողիկոսութեան» տիտղոսին յաջորդած է այժմ բոլորովին՝ «Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւն» պաշտօնական մակերկրը, յօրէ անտի աթոռանիստն որոշուած է փոխադրել Կ. Պոլիս, որոյ թեմականներն են՝ Վենետիկ և Վիէննայի Միթրարեանք և Անտօնեան Ս. Հարք:

Տ. Անտօն-Հասուն պատրիարք, որ Դալթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցին մկրտուած էր, 1866 սեպտ. 14ին իր արդէն ոտանձնած պատրիարքութեանը հետ, իր անձին վրայ միացուց Լիբանանու կաթողիկոսութիւնն ալ, Պետրոս Թ. անուամբ, և 1867 յուլ. 12ին, Ս. Պապին յատուկ կոնդակաւ, Լիբանանու Աթոռոյն թեմերը՝ Սազըզ-Աղաճիի պատրիարքարանի Աթոռոյն հետ ի մի ձուլեց:

Տ. Անտօն-Հասուն Պետրոս Թ. թղ կարգինաւորութեան կոչուելով ի Հռովմ, 1881 օգոստ. 4ին Պատրիարք-Կաթողիկոս ընտրուեցաւ Տ. Ստեփաննոս Պետրոս Թ. Ազարեան, և 18 տարիներ վարելով այս պաշտօնը, վախճանեցաւ Զատիկ տօնի երկրորդ օրը:

Չինք գիտեր թէ, այս ժամանակագրական ցուցակին ո՛ր կողմը պիտի գտնուէնք՝ Հակահասունեանց առժամեայ կաթողիկոս Պաթիթիարեան Յակոբ Արքեպիսկոպոսը, որ ձեռնադրած է 1877ին Գաղանձեան Սուրբիս, Քիւրկեան Յովհանն և Դաւթեան Սերովբէ եպիսկոպոսները:

Բայց մենք անցնինք:

Այժմ, պատրաստուած են Հռովմէադաւան ազգայինք, Տ. Աղարեանի յաջորդ մը ընտրելու՝ յառաջիկայ յունիս 24ի օրը: Ո՛վ է ընտրելին, Տակաւին ոչ ոք գիտէ: Ամէն ոք տենդուտ հետաքրքրութեամբ փարակուած է:

Կ'ըսուի թէ՝ տմանք՝ իրենց ընտրելին ծեր կ'ուզեն տեսնել, և տմանք՝ երիտասարդ: Այլք՝ պահպանողականը կը փնտռեն, և ուրիշներ՝ յառաջխմականը: Ոմանք՝ Ամիրայական տոհմէ եկածը կը փափաքին, այլք՝ Ժողովրդեան դատարարգէն՝ իր արժանեօքը յառաջադիպել:

Ո՛րն ալ ուզեն, ընտրելեաց թիւը՝ արդէն սահմանափակ է, և մարդ հիմակուրէն չի կըրնար գիտնալ թէ՝ ո՛վ է լուրն ընտրելին, զի ժողովները, գումարումները և կարծեաց փոխանակութիւնները՝ առ այժմ գաղտնի կը մնան, և Գոնքլաի գոյն ունին:

Ուստի, կանխահաս է զարգիս չեշտեալ անուններ հրատարակել, ինչպէս որ ըրած էր տեղական Փրանսական թերթ մը:

Իսկ մենք բաւականանանք եպիսկոպոսաց կամ ընտրելեաց ցուցակն միայն աստանօր հրատարակելով:

Արպէս զի մեր օրաթերթերուն պէս, եպիսկոպոսաց անուններու ցանկ մը ընդօրինակած և հրատարակել կարծած ատեննիս, կմայրք մը ներկայացուցած չըլլամք ընթերցողաց, կը փափաքինք որ՝ իւրաքանչիւր եպիսկոպոսին նկատմամբ, երկտող ծանօթութիւն մ'ալ կցեմք սատ, ի ղիւրութիւն քուէարկու համազգայնաց, եկեղեցական ըլլան անոնք, թէ՛ աշխարհիկ:

\* \* \*

1.—Տ. Մեղրոն Գերապայծառ Նազարեանց. Արքեպիսկոպոս Մամպոյ (Մերտին), 68 ամեայ բարի, գիտուն և սրբակեաց եկեղեցական մ'է: Իր կրթութիւնը՝ Զրմմառառած, և յետոյ բրօքականտայի ալ աշակերտած է: 1864ին, ի Զրմմառ՝ Գրիգոր-Պետ-

րոս Ը-րդ կաթողիկոսին՝ երկոտասներորդ ձեռնադրած եպիսկոպոսն է: Շուրջ 45 տարիներ կան, որ Մերտինի թեմերը կը կառավարէ, և այս շրջանին մէջ՝ ի Զրմմառ Տեղապահութեան պաշտօն ալ վարած է՝ Գրիգոր կաթողիկոսի վախճանէն յետոյ:

Անձամբ զինքը ճանչնալու պատիւը ունեցած եմ 1881 օգոստոսին մէջ, երբ Տ. Աղարեան սրբազանի կաթողիկոսական արարողութեան մասնակցելու համար Պալիս հրաւիրուած էր:

Իր դէմքը՝ կատարեալ տիպ մ'է հին հայրապետներու, իսկ շարժումները և նիստն ու կացքը՝ կարի ծանրաբարոյ, որ պատկառանք և ակնածանք կ'ազդեն, գոգցես զինքը չըջապատող բոլոր խօսակիցներուն վրայ:

2.—Հաճեան Սահակ Գերապայծառ. Արքեպիսկոպոս Սեբաստիոյ և Նեղոկիոյ: Տոհմաւէր, եռանդուն և հաստատամիտ եկեղեցական մը: Զրմմառեան է, և ողբացեալ էնՖիլյէճեան Գրիգոր հանճարեղ վարդապետի դասընկերներէն:

Երբ տակաւին վարդապետ էր, Տ. Աղարեան սրբազանի փոխանորդութիւնը կը վարէր, և ես իր մօտը յաճախելով, ըստ բաւականին օգտուած եմ իր ծննդավայրի գաւառաբարբառներէն, որ յետոյ՝ «Պատկեր» հանդէսի չորս պրակներուն մէջ, պարբերաբար հրատարակուեցան այդ բառերը՝ ի վերծանումն Հայ բանասիրութեան:

1892ին եպիսկոպոս ձեռնադրուած է:

3.—Թիւրքեան Աւետիս Գերապայծառ: Ի կազիր՝ Յիսուսեանց աշակերտած, բայց Զրմմառի միաբան գրուած է: Շատ բարեկիրթ, տոհմաւէր, ուսեալ և լեզուագէտ է կ'ըսեն: 1890ին եպիսկոպոս ձեռնադրուած է Մարաշի համար, բայց այժմ Բերիոյ վիճակաւ որ արքեպիսկոպոսն է, որ փայլուն համբաւ կը վայելէ ազգային յարանուանութեանց մէջ:

4.—Պօղոս եպիսկոպոս Էմմանուէլեան՝ Կեսարիոյ: Աշակերտ Բրօքականտայի և միաբան Զրմմառու: Բաւական զուարճախօս է: 1881ին՝ Տ. Աղարեան սրբազանի անդրանիկ ձեռնասուն եպիսկոպոսն եղած մ'է: Բրօքականտայի հին Աստուածաբաններէն լինելով, Բողոքականութեան դէմ պայքարած է: Աստուածաբանութեան և Փիլիսոփայութեան երկեր

ունի: Ինքն՝ ըստ ինքեան բարի ծերունի մ'է: Յուսեալները վարչագէտ չէ կ'ըսեն իրեն համար, բայց և այնպէս 18-20 տարիէ ի վեր Կապադովկիոյ թեմերուն մէջ ինչպէս կ'ըսաւ պաշտօնավարել, և արեւակից ու համազգային ժողովուրդներն՝ համերաշխարար կառավարել:

5.—Պօղոս գերապայծառ Մարմարեան, Եպիսկոպոս Պոնտոսի, Ամասիոյ, Մարգուանու և յարակից վիճակաց: Ինքը՝ Պօղոս Հասուն կաթողիկոսի դպրոցի սաներէն է:

Ամէն ոք կը վկայէ իր թեմերուն մէջ, և իր առաջնորդական շրջանէն դուրս՝ որ Մարմարեան՝ բացարձակ առաքինի և սրբակեաց եկեղեցական մ'է, հոգելից աստուածարան մը: Պահպանողական վարիչ մը լինելով հանդերձ՝ չատ սիրուած է Պոնտոսարեանի բոլոր ազգերէն, և ազգաց ներկայացուցիչներէն:

Նպարեան Մատթէոս Եպիսկոպոսին, Եդեսեան Յովհաննէս սրբազանին, Հրաշագործ Տիգրանեանին հետ՝ շատ մտերմութիւններ ունեցած, և վիճակային ինչ ինչ գործեր, սիրով և խաղաղութեամբ կ'արգադրած ու վերջացուցած է:

Եթէ կայ Եպիսկոպոսաց մէջ որ բնաւ թեկնածու չէ, ու չի փախաբիր պատրիարքանալու կամ կաթողիկոսանալու, կը հաւատա՞ք թէ, այն իսկ է, Մարմարեան Պօղոս Եպիսկոպոսը, որ իր թեմին մէջ լռիկ մնջիկ կը գործէ, ու գոհ է իր վիճակէն, և նորէնոր ձեռնարկութիւններ կ'ընէ փառասոր ու հոյակապ եկեղեցի մը կանգնել տալու այն աւերակներուն ու հողերուն վրայ, որ երբեմն Գոլէճցոյ և Արբացոց պայքարներուն կրկէսը դարձած էր:

Փա՛ռք Մարմարեանին:

6.—Յարութիւն Եպիսկոպոս Ճամճեան Պրուսայու: Աշակերտ է Բրօքականոյ, և 1884ին Եպիսկոպոս ձեռնադրուած:

Բիւթանական Արքեպիսկոպոսին հետ ժամանակին բաւական չափուած ու միշտ ներհակ քաղաքականութեամբ վերաբերուած ըլլալով, դժբաղդարար գինքը շատ մօտէն սերտելու ժամանակ չեմ կրցած ունենալ, ի Պրուսա երթեւեկած շրջաններուս մէջ:

7.—Աւետիս գերապայծառ Արփիարեան, Արքեպիսկոպոս Անարգարայ: Ինքը՝ բնիկ

Պարբերդի, ծանօթ ամիրայական դերդաստանէ մը սերած է: Յետոյ աշակերտ Բրօքականոյ: 1890ին Եպիսկոպոս ձեռնադրուած և անցեալ տարիէ ի վեր՝ կաթողիկոսական և պատրիարքական փոխանորդ, իսկ այժմ Տեղապահ անուանուած է:

Պարզ և անսեթեւեթ եկեղեցական մ'է, Գիտէ Լատիներէն, Իտալերէն, Ֆրանսերէն և Տաճկերէն: Բաւական կուսակցութիւն չահած է իր կողմը՝ ընտրութեան պայքարին մէջ մրցակիցները յանկարծակիի բերելու համար:

8.—Քչուրեան Կարապետ գերապայծառ, Եպիսկոպոս Կարնոյ: Աշակերտ Յիսուսեանց, ուսեալ և լեզուագէտ: 1890ին Եպիսկոպոս ձեռնադրուած: Պահպանողական եկեղեցական մ'է սա: Ոմանք անուանած են գինքը «Գիւղին մենակեացը»:

9.—Բիւրէլեան Յովհան գերապայծառ, Արքեպիսկոպոս Ատալիոյ: Ձեռնադրիչ Հայ ծխի ի Հոռով: 1877ին Հակահասունեանց պատրիարքութիւնն ըրած է: Այժմ Հոյ-Հոռովեան Եպիսկոպոսաց ամենէն բրածոյ եկեղեցականը լինելով հանդերձ, ներկայ ընտրութեան մասնակցելու համար, մայրաքաղաքս եկաւ անցեալ չարթու:

10.—Ճնտոյեան Ներսէս գերապայծառ, Եպիսկոպոս Տարօնոյ: Ազնիւ և բարեկիրթ, քաջ լեզուագէտ, տոհմաւոր և կրթաւոր, Վենետիկեան Միթիթարեան մը: 1892ին Եպիսկոպոս ձեռնադրուած է: Ունի ժամանակագրական կարգ մը երկասիրութիւններ: Երբեմն Քաղիկեօնի Միթիթարեան վարժարանի պատմութեան դասաւանդ էր, և վարժարանի սաները՝ իրեն նկատմամբ կտրի համակրանք և զմայլանք կը աւանդէին:

11.—Միքայէլ Եպիսկոպոս Պաշտօնական Մելիտինէի: Ի միաբանութենէ Զրմնառու: Նորապսակ Եպիսկոպոս մը, Պորթսոսեանի հանգ. Արքեպիսկոպոսին սաշտաւանութեանը տակ զարգացած և յաւաքացած:

12.—Անդրէաս Եպիսկոպոս Չէլէպեան Տիարպէթլիի: Աշակերտ Բրօքականոյ, ինքը դեռ նոր ձեռնադրուած Եպիսկոպոս մ'է թէեւ, բայց իր ազգատոհմը՝ շատ հինգած ազնուականութեան «Երկրիկ» մ'է: Իր հայերէն խօսակցութիւնը թէեւ ոչ ընթացիկ ու սահուն, բայց հատընտիր դարձուածքներ

ոչ նրբին մտքեր կ'արտայայտէ : Իսկ երբ արաբներէն խօսեցու ըլլայ, գոյցես մայրենի լեզուի պէս դիւրաթաւալ և ճկուն ոճով կը շեշտէ իր միտքը :

13.—Իսրայէլեան Ստեփան եպիսկոպոս Խարբերդու : Աշակերտ Բրօրականտայի : Այս ևս վերջին և վերջնիկն իտալական եպիսկոպոսաց օժակիցն ելած է քանի մը շարաթնեի յառաջ ի Բերա, Ս. Յովհան-Ոսկերերան եկեղեցւոյն մէջ : Իր մասին ասկից աւելի ծանօթութիւն մը չունինք :

14.—Սերովքէ եպիսկոպոս Դաւթեան յեղիպոս :

Սոյն տաղանդաւոր և լեզուագէտ եկեղեցականը, ըստ իս, պատրիարք-կաթողիկոսական ընտրելի ցոյց տալէ աւելի, Եգիպտոսի Առաջնորդական ընտրելի ներկայացնելու է, քանի որ տեղւոյն բոլոր Հայ յարանուանութեանց սիրելին և նազելին հանդիսանալէ զատ, Վսեմ. Ետղւոյ-Արթին փաշային ալ ընտրելին է :

15.—Վենետիկոյ Արքահայրը՝ Տ. Իգնատիոս եպիսկոպոս Կիւրեղեան, ինչպէս նաեւ Վիէնայի Արքահայրը՝ Տ. Արսէն եպիսկոպոս Այտլենեան, եթէ քաղաքական-օրինական արգելիչ պատճառներ չունին, ինչո՞ւ համար պատրիարքական ու կաթողիկոսական ընտրելիներ չի հանդիսանան, քանի որ միեւնոյն եկեղեցւոյն սպասաւորութեանը կոչուած են անբոսին ի դպրութենէ և ի միաբանութենէ :

16.—Նոյնպէս, Զրմմառու մայրապանուց Բերահայրն, Տ. Անդրէաս Անդրէասեան, իրեն եպիսկոպոսապետիւ եկեղեցական մը, ինչո՞ւ համար զրկուի այդ ընտրելեաց ցանկէն, քանի որ եկեղեցական բացարձակ օրէնք մը չկայ՝ վարդապետներն ալ ձեռնադրութիւնը այդպիսի ընտրութեան մը հանդէպ :

17.—Ինչո՞ւ չը յիշենք Անտօնեան միաբանութեան վանքին ծերունի մեծաւորը՝ Հայր Ռաֆայէլ Իսովլէրտեան վարդապետը, ըստ որում Անտօնեան միաբանութիւնն՝ ամենէն հին միաբանութիւններէն է Հռովմէական ազգայնաց մէջ, և հաստատուած է 1704ին նախաձեռնութեամբ Յովսէփեան Յակոբ քահանային :

Եւ միթէ՞ Սրբիւեան Արքայապետ եպիսկոպոս, Տանն Լիբանանու առաջին կաթողիկոսը՝ Ս. Անտօնի կանոններով չի հաստատուեց

իր վանքը՝ և կալմեց իր փառաթիւ միաբանութիւնը :

18.—Չէ՛, մի՛ կարծէք թէ մոռցած եմ կամ մոռցայ ներկայացնել Պօղոս գերասպա՝ ծառ. Թէրզեանը, Ատանայի այն աշխարհածանօթ եպիսկոպոսը, որ Բրօրականտայի աշակերտ է թէեւ, բայց մեր էջմիածնայ ձեմարանէն ելած վարդապետաց շատերէն աւելի քաջ ուսումնասիրած է Հայոց ծէսերը և արարողութիւնները :

Ուստի, դիտմամբ ամենէն վերջը ձգեցի իր անունը, որ ամենէն աւելի խօսիմ իր նկատմամբ :

1895ին էր, յԱտանայ ծանօթացայ իրեն : Թէրզեան՝ բնիկ Կուսինացի է : Տարիքը հազիւ թէ 50 կայ : Կրթութիւնը՝ ինչպէս գրեցի, ի Հռովմ առած է : Քաջ լեզուագէտ և գիտուն : Առաքելի, սրբակեաց, անձնուրաց առաքեալ մ'է : Արժանաւոր հետեւող մը կը կարծուի՝ Ներսիսեանց և Գրիգորեանց : Սիրեցեալ է յազգայնաց և յօսարաց : Այո՛, անխնջ աշխատող մը տեսայ հո՞ն Թէրզեան գերապայծառը : Քաջ բեմբախօս մը, ճարտար վարչագէտ մ'էր Նա : Բոլորովին խանդ և աւիւն կտրած գոգցես Ազգին յառաջադիմութեան համար : Մտրդը՝ նոր գաղափարաց : Մեծ կրթասէր մը՝ ընդհանուր հասարակութեան հիացման և սիրոյն արժանացած : Այո՛, մեծ հայրապետ մը լինելու ամէն ձիրքերով օժտեալ է արդէն :

Ահա՛ այս առաւելութեանցը համար չէ՞ր որ 1892ին ի Պոլիս, եպիսկոպոս ձեռնադրուեցաւ Հաճեան Սահակ Սրբազանի հետ, և յայնժամ հանգ. Առանեան Կարապետ եպիսկոպոսը՝ Թէրզեանի այդ ծանօթ արժանիքները գնահատելով, իրեն յաջորդ ներկայացուց Ատանայի վիճակին համար : Բայց երկուստորդ վարդապետը : Կ'ըսեն թէ, ի սկզբան մերժած է ընդունիլ այդպիսի փափուկ և բազմապահանջ պաշտօն մը և եպիսկոպոսական բարձր աստիճանը. թէև յետոյ՝ եղած թախանձանաց վրայ, ստիպուած է ստանձնել : ՅԱտանա և իր չրջակայները ուղեւորող մը՝ կարելի՞ է որ տեսած չըլլայ Թէրզեան եպիսկոպոսի յԱտանա և ի Հաճըն լինած վարժարանները, հաստատած Մայրապետանոցը :

Քանիցս յԵւրոպա ճանապարհորդած տեն, մասնաւոր իմն եղանակաւ, բարձրաս-

տիճան անձնաւորութեանց քով, գիտէ՞ք, ինչ պատուասիրութիւններով մեծարուեցաւ:

Վերջին անգամ չէ՞ր, որ Պէլճիգայի հոգեւորական Աւագաթողովին ներկայ գտնուելով, սքանչելի պերճախօսութեամբ Քրանսերէն ճառարօսեց, ամբողջ ունկնդրաց հիացումն առ ինքն գրաւելով: Ահա՛ այս առթիւ զինքն «Նոր-Պօլոս-Առաքեալ» կոչեցին:

Թէրզեան սրբազան՝ զանազան հնախօսական տեղեկութիւններ և դրութիւններ ալ համբարած է: Հայ, եկեղեցւոյ ծէսերու և արարողութեանց նկատմամբ ընդարձակ ուսումնասիրութիւններ պատրաստած է:

Ասոնցմէ զատ, ինչ որ ամենէն հարկաւորն է, Ժողովրդական և եկեղեցական իրաւանց անյեղէն տխրեան հանդիսացած է միշտ:

Ձեռնումներու մեծ թշնամին եղած, և խորագան ի ձեռին, կատարելապէս առաքելական համարձակախօսութեամբ մաքառած, ոգորած է ամէն տեղ բարոյականի թշնամեացը դէմ:

Այսօր՝ այսչափ:

Ա. Յ. ԱՅՎԱԶԻԱՆ

## ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ

ՀԱՅՐ ԱՐՍԷՆ ՂԱԶԻԿԵԱՆ

Ի ՄԻԻԹԱՐԵԱՆՑ

Ե Ի

ՀԱՇԱԿ

ԳԱՂՂԻԱԿԱՆ

ԱՐԴԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ

ՅՐԱՆՍՈՒԱ ԳՈՐԷ

ՀՍԿՈՒՄԸ

ԴԱՐԲԻՆՆԵՐՈՒՆ ԳՈՐԾԱԴՈՒԼԸ

Ա.

Ընթերցած էինք դասական գրաբար Հայ լեզուին թարգման թէ հեղինակ

Մխիթարեան Մեծ Քերդոյները: Անոնց տաղերը, նուագները, համերական կամ հայ գիւցաղներդութիւնները: Մխիթարեան կամ գրաբար Հայ Պառնասին օրէնսդիր Բագրատունիէն, Ալիշանէն, Հիւրմիւղէն յետոյ կ'ընթեռնունք այսօր աշխարհաբար երիտասարդ Մխիթարեան բանահիւս մը՝ Հայր Արսէն Ղազիկեան:

Նուիրական գրաբարին կաճառ հրաշակուած Մխիթարեանի մը համար՝ անշուշտ գրական հեթանոսութիւն մը պիտի համարուէր աշխարհաբար լեզուով խօսեցնել Մուսաներն՝ Հայ Վրնէթէն. ուստի սովորած էին անոնք սրբազան գրաբարով եւեթ առ հասարակ համարաւնել մեզ:

Սակայն Մխիթարեան գրագէտը ու քերդոյը՝ ապացուցանելու համար թէ կրնան ու գիտեն ինչպէս նախնի՝ նոյնպէս և արդի լեզուին հարադատ և անխարդախ աւանդապահըն ու շարունակողքն ըլլալ. կ'թոյլատրեն՝ ի մէջ այլոց բազմաց՝ և Հայր Արսէն Ղազիկեանի, որ՝ արդի Հայոց հանրագումար գրական ծառայութիւն մը մատուցանելու նախադրական փափաքովն ու նպատակով՝ աշխարհաբար թարգմանէ, գրէ ու ոտանաւորէ օտարազգի ճաշակաւէտ, ոճընտիր ու հանճարալիր քերդոյները:

Ինչպէս Բաղմալէպին հին ու նոր ընթերցողը, նոյնպէս և Մխիթարեանց հին թէ նոր Հարբ, հեղինակը թէ թարգմանիչը, մեզմէ շատ աւելի կրնան գնահատել և զգալ Մխիթարեան հին և նոր լեզուով թարգմանուած կամ հեղինակուած հին դասական և այժմէնի վիպական ոճով բանաստեղծութեանց իրարմէ ունեցած հասկնալի փայլուն աւաւելութիւնները:

Ընդհանուր Հայոց համար՝ գրական նոր ու շատոնց ի վեր բազմալի բերկրանք մ'է զոր կ'զգանք, և մեզ զայն զգացնել կու տայ ի մէջ այլոց, մասնա-

ւորապէս Հայր Արսէն Ղազիկեան . գրա-  
բարապաշտ Մխիթարեանք ալ աշխար-  
հաբարապաշտ լինել սիրած են : Կ'շնոր-  
հաւորենք՝ այս մասին՝ Ֆրանսուա Գո-  
բէի աշխարհաբար թարգմանիչն և Մխի-  
թար Աբբաի աշխարհաբար նուագեր-  
գուն :

Հայր Ղազիկեան իւր ողջն ճաշակի  
յառաջարանին մէջ կ'գրէ . «Տեւորակիկս  
եթէ լաւ ընդունելութիւն գտնէ, մոա-  
դիր ենք ուրիշ քերդուածներ ևս թարգ-  
մանել . ըլլայ նոյն հեղինակէն, ըլլայ ու-  
րիշներէն, աշխարհաբարի քերդուական  
աղբատիկ մատենադարանը մասամբ ի-  
ւիք ճոխացնելու փափաքով :» Մեր յար-  
գելի բանաստեղծ Հայր Արսէն, անշուշտ  
փափկօրէն ըսել ու հասկցնել կ'ուզէ հոս  
թէ՝ Վենետիկի թանգարանն՝ որ արդէն  
յորդելով պարպատելու չափ ակադէմոն  
է գրաբար թարգմանած քերդուածնե-  
րու ընտիր ու հմտալիր պաշարներով, և  
զուրկ կ'մնայ աշխարհաբար բանաստեղ-  
ծական գրուածներէ, պէտք է սկսի ճո-  
խանալ նաեւ աշխարհիկ լեզուով գրուած  
քերդուածներով ալ :

Մեր բանաստեղծ Հայր Ղազիկեան  
գիտէ անշուշտ, թէ Հայ բանաստեղծու-  
թեան թանգարանն արդէն կանուխէն  
բաւականաչափ ճոխացնել ջանացած են  
սկսեալ Նահապետ Ալիշանէն, Պէշիկ-  
թաշլեանէն, Դուրեանէն, Ռուսահայ ու  
թրքահայ շատ մը հին թէ նոր նշանաւոր  
ու ճաշակաւոր աշխարհաբար բանաս-  
տեղծութեանց հանճարալիր ու ընտիր  
հեղինակութեանց թէ թարգմանու-  
թեանց բաւականէն աւելի ճոխ հաւա-  
քածոյներով :

Մենք ևս մին ենք այն շատերէն, որ  
կը սիրենք բանաստեղծութիւնը գեղե-  
ցիկ աղջկան մը պէս, սիրուն ու անոյշ  
նուագի մը պէս : Նամանաւանդ երբ այդ  
բանաստեղծութիւնը փափուկ նիւթ մը  
գրկած և Հայր Ղազիկեանի հագցուցած  
Վենետիկեան սիրուն ախպոյն ու գողտ-  
րիկ ձեւովը պճնաղարդուած կը ներկա-  
յանայ մեր պապական ընթերցանու-  
թեան :

ՄԱՐԷՆ

## ՏՈՔԴ. Ն. ՏԱՂԱԽԱՐԵԱՆ

Ե Ի

ԻՐ ՀՐԱՏԱՐԱԿԱԾ՝ «ԾՆՆԴԱԿԱՆ ԳՈՐԾԱ-  
ՐԱՆՔ» ԱՆՈՒՆ ԳՐԲԷՆ ՆՄՈՅՇՆԵՐ

ՆՄՈՅՇ Ա.

. . . . . Խորհուրդ տամ(1)  
երկրորդական վարժարանաց և բարձրագոյն  
նախակրթարանաց հոգաբարձութեանց ու  
տեսչութեանց, որ մէկդի թողով նախապաշա-  
րուաներն՝ իրենց հովանոյն(2) տակ գտնուած  
բարձրագոյն կարգի աշակերտաց ու աշակեր-  
տուհեաց՝ մի քանի դասախօսութեամբ աւան-  
դել տան ծննդական գործարանաց ծանո-  
թութիւնն և առողջապահութեան(3) օրէնք-  
ներն, և ես հաւատ մեծ ունիմ թէ՝ այս-  
պէսով աւելի պիտի նպաստեն նոցա բարոյա-  
կանի և մտային ու ֆիզիքական առողջու-  
թեան՝ քան բարոյախօսութեան դասերով և  
մարմնամարզի հրահանգներով(4) :

1898 Սեպտեմբեր

Ն. Տ.

Կ. Պոլիս

ԾԱՆ. — 1. — «Կու տամ» ըսէ՛ք :

2. — «Կու տամ» ի տեղ «տամ» գրողը՝ գրե-  
լու էր «հովանոյն»՝ և ոչ թէ «հովանոյն» :

3. — «չ» տառասխալը մեր գրաշարինը  
չէ՛ :

4. — Մեր յարգելի բարեկամ Տիար Տոքդ .  
Տաղաւարեան, խորհուրդ կու տայ, կամ  
պատգամ կ'արձակէ որ՝ այսուհետեւ մեր  
վարժարանաց հոգաբարձուները, Տեսուչնե-  
րը, Ուսուցիչները և Ուսուցչուհիները, մեր  
դպրոցներու հասուկ աղջիկներուն ու մանչե-  
րուն բարոյականը շտկելու համար՝ իրրեւ  
Առողջարանութեան ճիւղ՝ կամ լրացուցիչ  
մասն, դաս տան և հասկցնեն անոնց՝ ծննդ-  
ական գործարաններու ծանօթութիւնը . . . :

Այդքան «տէքսթ» գիրք մը՝ ոչ միայն  
մեր երկրին մէջ դպրոցական աշակերտի մը՝  
այլ նոյն իսկ աշխարհի էն ազատամիտ ազգաց  
չէ թէ՛ թաղային, նոյն իսկ բժշկական վար-  
ժարանաց ուսանողներուն անգամ իբր դա-  
սաղիրք՝ չեն յանձնելու պաշտօնապէս :

Այդ գիրքով, չէ թէ՛ բարոյականը, այլ բացարձակապէս անբարոյականը դաստիարակած էք Տիար Տոքսը:

Մենք՝ իբրեւ արեւելեան ժողովուրդ, և բարոյապէս, և իմացականօրէն պահպանողական երկրի ու Ազգի մը գուռակներ, և զաւակաց տէր, չենք կրնար ներել՝ ո՛չ միայն մեր աղայոց յանձնել, այլ նոյն խոյ, մեր ձեռքն առնել խոյ կը պփգանք Ձեր այդ գիրքը: Թող ներուի մեզ մեր այս բացառութիւնը՝ և չի նկատուի իբր Փարիսեցիներ:

Ժամանակ մը Արմենակ Հայկունի՝ «Գաղտնիք Բնութեան», և ուրիշներ ալ, նման գրքերով, արդէն ձերինէն աւելի ճոխօրէն, համեմատօրէն բացատրած էին, բայց նոյն ատենն ո՛չ միայն ծնողքները, ուսուցիչները, այլ նոյն խոյ գրաւորաւորներն անգամ իբրեւ հասարակաց պարկեշտութիւնը խոցող, գայթակղող հրատարակութիւններ, անոնց վաճառումն ու ընթերցումը արգիլեցին: Ճիշտ ինչպէս կառավարութիւնք արգիլած են, և կ'արգիլեն արու և էգ ծննդական գործարանները հոլամերկ ներկայացնող պատկերները, խաղու թղթերը, վէպերը ևն:

Անգլիա և Գերմանիա, Ջորաի «տէգօլթէ» վէպերը պաշտօնապէս արգիլեցին: Ենորհիւ «Բիւզանդիոն»ի Արտօնատէր - Խմբագրապետին՝ այդ տեսակ անբարոյացուցիչ վէպերն հարուածող խորհրդածութեանց, ատենէ մ'ի վեր էր որ, դադարած էին մեր մէջ ևս մրան բաց հրատարակութիւններ: Թէև անցեալները՝ պարբերական հանդէսի մը մէջ, չը գիտեմ որ հրապարակագիրն՝ տալիանքի բանաստեղծութիւնը «անուշ անուշ» սորվեցնելու համար, երկնքի թռչուններու և երկրի կենդանիներու պէս «սիրուելովն», կ'ըսէր:

Տիար Հորոյ՝ որ անվայել նկատած էր օր մը՝ շերամի զուգաւորութեան անհրաժեշտ մէկ գիտական բացատրութիւնը, ի՞նչ կը խորհի արդեօք, Տոքս. Տաղաւարեանի գրքին առթիւ, որ կ'առաջարկէ Ազգ. պաշտօնական մարմնոց, որպէս զի՝ դպրոցներու մէջ պաշտօնապէս ծանչցենք մեր զաւակաց ծննդական անդամները, անոնց պաշտօնը, իրենց տունէն աւելի բաց ու խայտառակ բառերով, և միանգամայն զանոնք իրենց դայթակղեցուցիչ ու լպիրշ մանրամասնութեամբը ներկայացնող գործնական պատկերներով:

«Չ միայն վարդապետեալ՝ այլ պատկերազարդեալ անբարոյականութիւնը:

Մեր տղաքները և աղջիկները մանկարարձ ընելու չենք որ, դպրոցին մէջ կարդացնենք այդպիսի «տէգօլթէ» գիրք մը: Բժշկութեան և մանկարարձութեան համար, մասնագիտական վարժարաններ հաստատած է կառավարութիւնը, ուր կը դաստիարակուին այդպիսի անդամագիտական մասնագիտներ:

Ժամանակին՝ Տոքս. Ն. Տաղաւարեան՝ Տարվինի սկզբունքները տարածելու համար, փորձած էր կարգ մը հրատարակութիւններ ընել, և ծանօթ թաղի մը երկսեռ վարժարանի տնօրինութիւնը վարած ատենն ալ դաստիարակը (\*). նոյն ատեն, ոչ միայն Ազգային Մամուլը՝ այլ և Ազգ. Կրօն. Ժողովի Ատենապետ Նառ-Պէյ, իրեն դէմ գինեցան, և լռեցուցին զինքը: Գրող մը՝ հեղինակ թէ թարգմանող, նկատի առնելու է զինքն ընթերցող ժողովրդին բարոյական ու իմացական կարողութիւնը, թէ արդեօք մարտելի՞ են իր գրուածները. նամանաւանդ՝ յարգելի Տոքսը՝ ազգին այժմու բարոյապէս ու նիւթապէս անկեալ ու յետեալ վիճակը ի նկատի առնել ուղեօք էր, իր գիրքը հրատարակելէ առաջ:

Կրօնքին, հաւատքին, բարոյականին, հասարակաց բարեկարգելութեան սկզբունքները՝ հիմերը խախտող հրատարակութիւններ՝ որքան ալ ճշմարիտ ըլլան, ո՛ր ատուիճան ալ ճշմարտակերպ երանգներ պարունակեն, կ'ենթարկուին անոնք դատապարտութեան, նոյն խոյ տունէն աւելի գիտնական ազգերու մէջ:

Բնութիւնը՝ իր ամենէն հրապուրիչ սքանչելիքները՝ հրաշակերտ հրապոյրները պատկառաւորեցիկ փառիկաշնորհ քօղերով ծածկուած կը մատուցանէ: Եւ բնութեան այս գաղտնախորհուրդ ճշմարտութիւնները եթէ պարզուին՝ հողանին, իրենց վսեմութիւնը կը նսեմանայ, գարշանք կ'ազդեն, սլփանք կը բուրեն: Հո՞ն է նաև Յաւիտենականին վսեմ խորհուրդը, որու առջեւ ամէն ինչ կը խոնարհի, և ընդգլղող ջարաջար կը պատժուի: Բնութիւնը սարապուլթեմէն կը սոսկայ կ'ը-

(\*) Ինչպէս իր ծննդավայր Սեբաստիոյ ազգ. վարժարանի մէջ ալ Տարվինեան վարդապետութիւնը դաստիարակու համար, միևնոյն արգելքներուն հանդիպած է տեղւոյն ժողովրդեան կողմէ:

սէր Կալկէ . բայց կը ներէ՛ք անշուշտ՝ սիրե-  
լի Տոգտոր , որ գրչիս խորհուրդին հետեւե-  
լով ըսեմ թէ , անիկա՝ պարապութենէն ա-  
ւելի տգեղ մերկութենէն , հոլամերկ տափա-  
կութենէն է որ կը ստակայ : Եւ ասոր համար  
է որ անհունութիւնը կապոյտ եթերով մը  
սքողւած է , սարերը ծառերով ծածկուած ,  
դարերը թուրերով գեղազարդուած , արտե-  
րը կանաչով դորդուած , խորտիները ծա-  
ղիկներով պննազարդուած են :

Քաշեցէ՛ք մատերնիդ այդ քնքուշ ծաղկին  
վրայէն , և մի՛ փորձէք փթթելէ առաջ թոր-  
չամել զայն . անփորձ ոտքերովնիդ մի՛ յան-  
դըքնիք կոխոտել և դեղնեցնել այդ առայգ՝  
բայց փափկադալար կանաչութիւնը . մի՛ մո-  
տենաք այդ դողդաջ թփիկին , որ ձեր կի-  
զիչ չունէն պիտի խամրի . մանաւանդ՝ մի՛  
յանդգնիք շարժել այդ կուսապատկառ քո-  
ղը , որ դարեր իրարու շարահիւսուած՝ ու-  
տայնած և բնութեան վրայ ձգած են : Հո՛ս  
բանաստեղծութիւնն է որ փափկութիւնով  
կ'ընդվզի ձեզի դէմ , հո՛ն գիտութիւնն է որ  
կ'արհամարհէ ձեր փորձը , և անոնց հետ հա-  
մեսա պարկեշտութիւնն է որ նողկանաց  
տարափը կը տեղացնէ ձեր գործին վրայ :  
Այդ ձեր գործը՝ որ հանրութեան ծառայու-  
թիւն մատուցանելու պատրուակին տակ , ժո-  
ղովուրդին բարեմտութիւնը , վստահութիւ-  
նը չարաչար շահագործելէ՝ ուրիշ նպատակ  
չի կրնար ունենալ . անոր տկար կողմէն զար-  
նելով , իր սիրտը խաշտանգող տարափոխիկ  
մէկ վէրքը՝ իրր թէ դարմանելու դիտումով ,  
կը նկարագրէք զայն՝ ամենէն լալիք Լեոսո-  
եական և Սաֆօեական ոճերով , չենք կրնար  
հասկնալ թէ , ի՛նչ կը նշանակէ , երբ դար-  
մանումի մասին՝ նպատակաւոր և ոչ-գոհա-  
ցուցիչ եղանակով կ'անցնիք՝ ընթերցողին  
քթին խնդալով :

Ընթերցողը թերեւս չափազանցութիւն  
կամ նախապաշարում համարին մեր այս բա-  
ցատրութիւնները . բայց ահա՛ ստորեւ կը  
դնենք երկրորդ նմոյշ մ'ալ այդ գրքէն , և  
մեր ընթերցողներու ամթ խաճութիւնը խո-  
ցող բառերը դիտմամբ չենք յապուեր , ու  
նոյնութեամբ կը դնենք , որպէս զի աղէկ  
հասկցուի թէ , ի՛նչ տեսակ գիրք մ'է եղեր  
որ մեր դպրոցի հասուկ աղջիկներուն ու հա-  
սուկ մանչերուն իբրեւ դպրոցական դասա-

գիրք գործածել կը պահանջուի , և թէ մենք  
ինչո՛ւ կը մերժենք ու կը դատապարտենք  
զայն :

ՏՈԳ . ՏԱՂԱԽԱՐԵԱՆԷՆ  
ՆՄՈՅՇ Բ .

Գ . «Բուժուցի մերձաւորութիւն» . — Այրն  
կը գոհանայ միայն բունոցն շփել իւր վարոցի  
ծայրովն՝ առանց խոռոպճուոյ մէջ մոռնանե-  
լու զայն : Այս միջոցն ալ ազատ չէ արգա-  
սաւորութեան «վտանգէն» . արդարեւ շատ  
անգամ այս եղանակաւ կանայք՝ և նոյն իսկ  
իրենց կուսական թաղանթն ունեցող աղջիկ-  
ներ յղացած են , զի դուրս թափած սերմի  
մի կաթիլն եթէ խոռոպճիէն ներս թափան-  
ցէ՝ անոր մէջ գտնուած հազարաւոր սերմ-  
նակներանից մին կը բաւէ արգասաւորու-  
թիւն յառաջ բերել :

Դ . «Ձեռքով ծննդական գործարանաց  
փոխադարձ գրգռում և կամ կրկնակի գի-  
ջութիւն» . Սա սլէսք չունի բացատրու-  
թեան . (Միւսներն ունէի՞ն) :

Ե . «Լեզուաւ և չրթամբ գրգռում ծնըն-  
դական գործարանաց» . Երկուքն ի միասին փո-  
խադարձաբար , և կամ առանձնաբար (հիշա՞մ)

Է . Յիշատակեմք աստ վերջապէս երկու  
միւսնոյն սեւերու միջեւ տեղի ունեցած մեր-  
ձաւորական նենգութիւնք : Արանց համար  
սա «արուագիտութիւն» կամ «սոցոմակա-  
նութիւն» կ'անուանի՝ որ սլէսք չունի բա-  
ցատրութեան : Դժբաղդաբար դեռ այս մո-  
լութիւնն շատ տարածուած է յԱրեւելա : (\*)  
Պատանիք ընդհանրապէս իրենց դպրոցի չար  
ընկերներէն կ'ուսնին այս մոլութիւնն , դուս-  
տիարակը մեծ հսկողութիւն պարտին ընել  
առ այս եւ նամանաւանդ գիշերօթիկ վար-  
ժարանաց մէջ : Պատանիք երբէք զոյգ պառ-  
կելու չեն :

Աղջկունք և կանայք եւս միմեանց ծնըն-  
դական գործարաններու գրգռման հաճոյք-  
ներն կը վայելեն , զոր «փոխադարձ գիջու-  
թիւն» եւս կրնամք անուանել : Երբեմն ալ  
զարգացեալ համբ ունեցող կիներ այրի դե-  
րեր կը կատարեն . . . : Տեսնուած են վաւա-  
ռոտ կիներ՝ որոնց համբն չարունակական  
գրգռմանց աղաղաւ չափազանց զարգացեալ  
է , և իբր այր լալիք կանանց մեծ հաճոյք-

ներ կը պատճառեն։ Այս մուլութեան ենթարկեալք երբեմն այլ եւս անտարբեր կը մնան արանց համար։ Աղջիկներն շատ անգամ իրարմէ կ'ուսնին այս մուլութիւնն։ Կարեւոր է նաեւ աղջկանց հակողութիւնն նամանաւոր գիշերօթիկ վարժարանաց մէջ։ Աղջիկներն ալ զոյգ պառկելու չեն։

ՏՈԳ. ՏԱՂԱԽՍՐ.

(\*) Ինչո՞ւ կը քաշուիք, բարեկամ, բացարձակ յայտարարելու, ճշմարտութիւնն ըսելու թէ՛ Եւրոպան այդ ակտին բուն բուժարանն եղած է՝ և կ'մնայ. ու Արեւելք՝ այդ տեսակէտով, բաղդատումաբ Եւրոպայի՝ գլոխուած դրախտ մ'է։ Եւրոպական հին թէ՛ նոր հանրատուններու պոռնկութեանց, սոցոմական ու գոմարական մուլութեանց վրայ ճառող խոչորահատոր հեղինակութիւնք վըկայ չեն միթէ, որոց մէջ կը փայլին իրենց ինքնատիպ անբարոյականութիւնով մանաւանդ՝ եւրոպացի հին թէ՛ նոր բարձրատիճան կղերականներ, ծիրանափառ աշխարհականներ, քերթողներ, վիպասաններ, դուքսեր, կոմսեր, լորտեր, ելն, ելն։ Չէ՞ք յիշեր (բայց ոչ ժազօրի և Տընիսի անունով ձեր ճանչցած պատմութեանց պէս) Երուսաղէմի Թամբլիկներու (տաճարականաց) հռչակաւոր սողոմականութիւնը, որուն պատճառաւ, կրօնական այդ կարգը ի սպառ սպառ ջնջուցաւ։ Ողիմպոսիդ չաստուածներն անգամ, սոցոմական ալտը կը կրին իրենց ճակտին վըրայ։ Նեկտարն ու Ամբրոսիոսը կը մատուցանէին, գեղեցիկ պատանիներ, որոնք գիշուհիներէն աւելի կը յարգուէին ու կը սիրուէին։ Հելլադայի մէջ՝ սկսեալ Սոկրատէն, ինչպէս հին լատինաց մէջ՝ սկսեալ Վիրգիլէն՝ թողունք Յուլիոս Կեսարը, որ Կեղտերը նուաճեց, այլ Բիւթանիոյ Նիկոմէդէս արքային սէրէն նուաճուեցաւ, շատ նշանաւոր հանճարներ և իշխանական գլուխներ սողոմական մծեղնէութեամբ նշանաւոր եղած են։ Հին Ելլադայի մէջ՝ կիներն՝ սկսեալ Ասթափալէն, համարակաց հոմանիներու, հանրուհիներու նման սկսան հրապարակներն ու փողոցները «տէգօթէ» պտտիլ դիտումաբ՝ որպէս զի՝ այրերը կանանց գեղեցկութեամբն հրապուրուելով, մոռնան հելլէն պատանեաց ու երիտասարդաց գեղեցկութեամբ պառա-

ծանիլը։ Նորերուն մէջէն ալ միթէ դժուար է աչքի զարնող՝ մանաւանդ եղեւնական գէպքերով համակ օրինակներ մէջ բերել, որոց նմանը դուն ուրեք կը պատահի արեւելեայց մէջ։ Յիշենք անցողակի՝ 1867ին՝ Սոսէլ անուն եռամեկի գժրաղդ մանկիկին դէպքը, որ այն ատեն՝ մեծ աղմուկ հանած է ոչ միայն Ֆրանսայի, այլ բոլոր միւս աշխարհներու մէջ ալ. ինչպէս 78ին՝ Պոստո-Պէգիէի մէջ պատահած Օթի աղմկալոյց դէպքը։ Տէին Միէլի ինդիրը, և «Կոնաչ պուլպատներ» կոչուած Ժիլ և Ապատիլի եղբուկները. և քիչ մ'ալ մօտենալով մեր քթին տակը պատահած, տակաւին անցեալ տարի, Զմիւռնիաի՝ և այն ալ դպրոցի մը մէջ, Եւրոպայի Ֆէռքէյի աղտոտ ու վաճառող դէպքն ալ չէք յիշեր։

Գիտական ու վարդապետական գիրք մը, միակողմանի տեսութեամբ չի խորագրուիր, երբ Արեւմտեայք պատմաբանօրէն այդքան սողոմական, գոմարական են տնցեալին ու ներկային մէջ, ինչո՞ւ ուրեմն Արեւելեայց կը սեփականէք միայն սողոմականութիւնը։

Թէ՛ և՛ ինչպէս առաքինութիւնք՝ նոյնպէս և մուլութիւնք աշխարհաքաղաքացի են. ո՛չ ազգ՝ և ո՛չ ալ սեռ ունին։ Սակայն ի՞նչ է Արեւմտեայք չի տեսնելու դալ, և Արեւելքը նշանակելու Ձեր նպատակը։ Այդ ուրիշ խընդիր, եթէ Արեւելքի մէջ միայն ինքզինքնիդ կը տեսնէք։ Առ այժմ այսչափ։

ԿԵՍԱՐ

## ՃԱՐՏԱՐԱՐՈՒՆԵՍԱԿԱՆ

### ՆԵՐԿԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՍՊԻՏԱԿԱՅՈՒՄ ԵՒ ՃԱՐՊԱՏՈՒՄ ԲՈՒՐԴԻ

(Շաբ. թիւ 62 է.)

Պարզ ջուրէն անցնելէն վերջը, կը հանեն և զոյգ մը գլաններէ բաղկացած գործիքէ մը կ'անցնեն, աւելորդ ջուրերը քամելու համար, և յետոյ կը փռեն, որ ինքնին չօրնայ։

ԻՒՂԱՆՈՒԹԻՒՆ ԲՐԴԵՄԱՆԱՆԵՐՈՒ. քամեն, և կ'ենթարկեն իւղահանութեան — Բրդէ մանածներու իւղահանութիւնը աւելի շուտ կը կատարուի: Եթէ ասոնք շատ պրկուած են, պէտք է նախ ձգտել, որպէս զի խոստովին (զըվրըմաբ), և իւղահանութեան գործողութիւններու ազդեցութեան տակ չի քաշուին:

Ձգտել. — Գործիքը շատ սլարզ է. կը բաղկանայ գլխաւորապէս երկաթէ զոյգ մը հորիզոնադիր ձողակներէ (սլառա), որոց մին՝ վարինը՝ հաստատուած է գետինը ամրապէս, իսկ միւսը՝ վերինը, կը շարժի զոյգ մը երկայն և խոշոր պտուտակներու վրայ: Այս պտուտակները հաստատուած են վարի ձողակին երեսը՝ մասնաւոր սարքուածով մը, այնպէս որ, պտուտակներուն գլուխը յարմարեալ կ'ոթերով երբ շարժենք, վերի ձողակն ու վեր կամ վար կ'ենէ կ'իջնէ: Ձողակներուն լայնքին, կարգաւ ծակեր ծակուած են, որոց մէջ հաստատուած են երկաթէ երկթներ: Մանածի կարծերը կ'անջուեն այս երկթներուն վրայ, կարգաւ, և պտուտակները դարձնելով, վերի ձողակը կը բարձրացնեն, մինչեւ որ մանածներու կարծերը ըստ բաւականին ձգտին: Այս վիճակին մէջ, գործիքը ամբողջ, եռացած ջուրի մէջ կ'ընկղմեն, ուր մէկ քանի վայրկեան թողլէ վերջը կը հանեն: Կարծերու այն մասերը, որ երկթներուն պատկանած են, միշտ իրենց գանգրելու յատկութիւնը կը պահեն. այս պատճառաւ, եռացած ջուրէն հանելէն վերջը, պտուտակները կը թուլցնեն, և կ'արժեքուն տեղը կը փոխեն, կրկին կը ձգտեն՝ պտուտակները հակառակ կողմը դարձնելով, և կ'ընկղմեն նորէն եռացած ջուրին մէջ: Այս երկրորդ գործողութենէն վերջը եթէ, կրկին տեղ տեղ գանգրելու տրամադիր մասեր տեսնուին կարծերուն վրայ, անգամ մ'ալ կը կրկին գործողութիւնը, միշտ կարծերուն տեղը փոխելով: Պաղելէն վերջը, կարծերը պատրաստ կ'ըլլան իւղահանութեան գործողութիւնները ընդունելու. ասոնք որ մեր վերը յիշած ձգտելու գործիքը չունին, կարծերը ուժով կը պրկեն, կը կապեն և եռացած ջուրի մէջ կ'ընկղմեն, ուր կը մնան մինչեւ 10—12 ժամ: Կարծերը ջուրին երեսը չելլելու համար վրանին ծանր խուփ մը կը դնեն: Ջուրէն դուրս հանելէն վերջը, կը

Լոգաջուրը կը պատրաստեն 150 քաշ ջուրի մէջ 1 քաշ օճառ և 1 քաշ ալ նատրոն (սոտա) դնելով: Կարծերը 4 անգամ այդ լոգաջուրին մէջ կ'ընկղմեն, իւրաքանչիւր անգամին պրկելով և քամելով: Յետոյ միայն նատրոնի լուծաջուրի մը մէջ կը լողացնեն, որ կը պատրաստուի 100 քաշ ջուրի մէջ 2 քաշ նատրոն դնելով: Կարծերը երկու անգամ կ'անցնեն այս լուծաջուրի մէջէն, վերի բացատրուած եղանակով. և լուացքը կ'ամբողջացնեն 3 անգամ մաքուր ջուրի մէջ ցալելով:

Այն մանածները՝ որ մութ գոյնով պիտի ներկուին, նատրոնջուրի գործողութիւնը չեն կրկնէր, և կամ լուծոյթը շատ թեթեւ կը պատրաստեն, բաղադրութեան մէջ հազիւ կէս քանակով դնելով նատրոնը:

Ահաւասիկ ուրիշ եղանակ մ'ալ: Մեծ կակ կարասի մը մէջ՝ որու չափերն են, երկայնութիւն 3 մեդր, լայնք՝ 70 հարմեդր, և բարձրութիւն 80 հարմեդր. կը պատրաստեն՝ 32 քաշ մանածի համար լուծաջուր մը, որ կը բաղկանայ 32 քաշ նատրոնէ, 3 ու կէս քաշ կանանչ օճառէ, 1000 քաշ ջուրի մէջ լուծուած: Մանածները կ'ընկղմեն այդ լուծաջուրին մէջ, անգամ մը տակն ու վրայ կ'ընեն, կը հանեն, և 40—50 հարիւրորդի աստիճան տաք ջուրի մէջ ժամու մը չափ կը թնթեն. յետոյ՝ պաղ ջուրի մէջ կը լուան, կը քամեն, որ պատրաստ կ'ըլլայ ներկուելու: Այդ լուծաջուրը չեն թափեր. երկրորդ անգամ մ'ալ կը գործածեն, և 32 քաշ բուրդի համար, կ'աւելցնեն վրան 8 քաշ նատրոն, և 2 քաշ ու կէս օճառ:

Բուրդի մանածներու իւղահանութեան համար կը գործածեն նաեւ Շլիբէր կոչուած դրութիւնը, որու լուծաջուրը կը բաղկանայ հետեւեալ կերպով. 100 քաշ բուրդի համար, նատրոն՝ 10 քաշ, իւղիտ (oléine=օլէին)՝ 5 քաշ, և 10 քաշ ալ անուշադրի ջրաքլորատ (քլօռիտառադ տ'ամօնիաբ): Լոգաջուրը 35—40 աստիճան կը տաքցնեն և այնպէս կը գործածեն:

Անուշադրի ջրաքլորատը միանալով նատրոնի բնածխատին հետ, յառաջ կը բերէ անուշադրի բնածխատ (բառպօնադ տ'ամօն-

եաք) և պարզ խոհանոցի աղ: Այսպէս յառաջ եկած անուշադրի բնածխատը, բուրդի իւղահանութեան համար ամենէն լաւ արդիւնքը կու տայ, քանի որ բուրդին վրայ իր ներգործութիւնը նուազ իրատ է, քան նաւորոնինը, և անոր կակղութիւնը կը պահէ:

Երբ բուրդերը մաքրուելէն վերջ, ներկելէ առաջ ժամանակ մը պահել հարկ ըլլայ, այն ատեն պէտք է խնամով չորցնել և ծրարել, առանց ո և է մաս մը բաց օդին ձգելու: Երբ վնասեալ, այդ պարագային՝ օդին մէջ գտնուած թթուածինի ազդեցութեան տակ կը դեղնի, որու վրայ արդէն խօսած ենք ուրիշ առթիւ: Այս դեպքում մասերը խիստ դժուարութեամբ կը ներկուին, և իրենց գոյնը աւելի մութ կը մնայ, քան միւս տեղերը:

Ներկելէ առաջ, այս չորցած մանածները նախ կը թրջեն թեթեւ նաւթնջուրի կամ թեփջուրի մէջ, յետոյ կը լուան, կը քամեն, և կը ներկեն:

**ԲՐԴԵՂԷՆ ԿԵՐՊԱՍՆԵՐՈՒ ԻՒՂԱՀԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՍՊԻՏԱԿԱՑՈՒՄԸ.** — Թէեւ կերպասներու պատրաստութեան ծառայող բուրդը նախապէս կը մաքրեն, ինչպէս տեսնեք վերը, բայց և այնպէս, ներկելէ առաջ հարկ է անգամ մ'ալ իւղատել, որպէս զի՝ վերջէն իր վրայ կառչած օտար նիւթերը մաքրուին: Այս օտար նիւթերը՝ ինչպէս ուրիշ անգամներ ալ ըսած ենք, մանելու և ստալակելու համար կ'աւելցնեն, գործողութիւնները դիւրացնելու համար:

Բայց այս վերջի գործողութիւնը խիստ թեթեւ կերպով կը կատարեն, որպէս զի՝ բուրդի նեարդներուն կեդրոնական խողովակի մէջ գտնուած պարարային նիւթը չի վնասուի, որ բուրդին կակղութիւն կու տայ:

Բրդեայ կերպասները իւղատելու համար, գրեթէ ամէն ներկարար իրեն յատուկ դրութիւն մը կը կիրարկէ. նոյնպէս կերպասներու իւրաքանչիւր տեսակի համար, ուրոյն դրութիւններ կան, իրենց արտաքին յատկութիւններէն յետոյ անաղարտ պահելու համար:

Խանձելու և յարգարելու գործողութիւնները՝ քիչ չափ տարբերութեամբ, կը կատարուին բամպակեայ պատառներու համար գործածուած մեքենաներով:

Ստանձատուում.— Ստանձատուումի գործողու-

թիւնը՝ ինչպէս իր անունէն կրնանք հասկընալ, կը կայանայ, կերպասները ստալակելու առթիւ գործածուած ստանձակերպ նիւթերը հանելու մէջ: Այս գործողութիւնը պէտք է կատարել, բոլոր այն գործողութիւններէն առաջ, որոնց համար տաքութիւնը անհրաժեշտ է. որովհետեւ՝ ստանձատուումը եթէ տաքութեան մէջ կատարուի, այն ատեն կարգ մը գոյանուտներ հալելով, ուժգնապէս կերպասի նեարդներուն կը կառչին, և այդ մասերը յետոյ դժուարութեամբ ներկ կ'առնեն, և կամ իրենց գոյնը տարբեր ըլլալով, տեղ տեղ ձառնաչաւոր երեւոյթ մը կ'ստանայ:

Ստանձատուելու համար կը գործածեն պարզ ջուր, բարեխառնութիւնը 35—40 աստիճան կ'ըլլայ ընդհանրապէս: Երեք անգամ լուալով, շատ պարագաներու մէջ կատարելապէս կը ստանձատուին կերպասները:

Հաստատում.— Գիտենք թէ, բրդեայ կերպասները երբ տաք ջուրի մէջէ անցնենք, կը քաշուին, կը կծկին, և այս կերպով իրենց լայնքէն և երկայնութենէն կը կորսնցնեն: Եւ որովհետեւ իւղահանութեան և ներկարարութեան գործողութիւններէն ու մանք տաք և եռացած լոգաջուրիւրու մէջ կը կատարուին, ըսել է կերպասները միշտ կծկուելու վտանգին պիտի ենթարկուին: Ահա ասոր՝ առաջը ստեղծու համար է որ, հաստատումի գործողութեան կ'ենթարկեն կերպասները: Ստեղծած են որ, բրդեայ անկուած մը՝ եթէ ուժգնապէս ձգտելով, եռացած լոգաջուրի ազդեցութեան ենթարկուի, երբէք իր տարածւոյն չի պարտիւնար: Եւ այս նպատակաւ հնարած են կարգ մը մեքենաներ: Կերպասները՝ այս մեքենաներուն մէջ կը ձգտեն թէ իրենց երկայնութեան, և թէ լայնքին:

Շար.

Ղ. ԲՈՂԱՏ

#### Կ Ա Ր Ե Ի Ո Ր

Շերամաւորոյծներու ուշադրութեան կը յանձնարարենք, թերթիս կողքին երկրորդ երեսին վրայ գտնուած Պուլուսեան եղբարց՝ ՄԱՆՐԱԳԻՏԱԿԻ ազգը:


## ԱՆԱՍՆԱԲՈՒԾԱԿԱՆ

ԿԵՆԴԱՆԵԱՑ ՏԱՐԻՔԸ ՀԱՆՁՆԱԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

(Շար. թիւ 62 էն)

—o—

11 տարեկան (պատ. 14).—Անկիւնները իրենց կարգին վերի ձեւափախութիւնները կը կրեն. կը կըրնան, կեղբոնական արծնիկը ետեւի եզերքին մօտեցած, հազիւ բարակ գծի մը պէս կ'երևի, — բայց միջնէկներուն արծնիկը անհետացած է:



Պատ. 14.—11 տարեկան. —Անկիւններու կեղբոնական արծնիկը իրենց ետեւի եզերքին մօտեցած, ատամնային տատղը երեւան ելած, և ակուններն ալ իրենց ետեւի կողմէն կ'որոցած:



Պատ. 15.—12 տարեկան. —Կեղբոնական արծնիկը բոլոր հերձատամներու վրայէն անհետացած, և անոր տեղ ամէնուս վրայ կ'երևի միայն ատամնային տատղը:

12 տարեկան (պատ. 15).—Ստորին հերձատամներու կրթութիւնը կատարեալ է գրեթէ, կեղբոնական արծնիկը բոլորովին անհետացած է, և ամբողջ հերձատամներու սեղանին վրայ մի միայն ատամնային տատղը կ'երևի: Վերի հերձատամներու եղջերակի պարկատակը կ'երևի տակաւին:

Պարզախ ձիաբաժանները ճիշտ այս տարիքէն կ'սկսին, իրենց ծախելիք ձիերը տարիքով պզտիկ ցուցներու համար, նենգութիւններ ընել, որ պարզապէս, հերձատամներու ատամնային սեղանին վրայ արուեստական եղջերակներ կը քանդակեն, անոնց կեղբոնը արծաթի անկենդանատով (azotste

d'argent), կամ սերիչ նիւթերով պատրաստուած անայլալ մեղանով սեւ բիծ մը ձեւացունելով ակռայի բնական «բակլայի ծիլին» նմանոյ:


Բայց այդ խարդախութիւնը շատ դիւրութեամբ կը ճանչցուի, եթէ անասունը ծախու առնուած ատեն, բակլայի ծիլին բոլորովին ուշադրութեամբ զննուի. որովհետեւ բնական բակլայի ծիլին բոլորովին միշտ արծնիկի բարակ չըջանակ մը կը գտնուի՝ ճերմակ գոյնով, ինչ որ արուեստականին բոլորովին կը պակսի:

12 տարեկանէն վերջը, այլ եւս ձիերու տարիքը մի միայն ակուններուն ձեւէն կը ճանչցուի, որ անկանոն կերպով բոլորածեւ կ'ըլլան:

13 տարեկան (պատ. 6).—Ստորին հատուները տակաւ եռանկիւնաձեւ կ'ըլլան, վերի անկիւններու կեղբոնական արծնիկը բոլորովին անհետացած է այլ եւս:



Պատ. 16.—13 տարեկան. —Հատուները կիսով չափ եռանկիւնաձեւ կ'ըլլան:



Պատ. 17.—14 տարեկան. —Հատուները կատարելապէս եռանկիւնաձեւ են, իսկ միջնէկները նոր կ'սկսին:

14 տարեկան (պատ. 17).—Հատուները կատարելապէս եռանկիւնաձեւ են. միջնէկները նոր կ'սկսին ըլլալ, և վերի հատուներու կեղբոնական արծնիկը տակաւ կ'անհետանայ:


15 տարեկան (պատ. 18).—Միջնէկները կատարելապէս եռանկիւնաձեւ են:

16 տարեկան (պատ. 19).—Ստորին հերձատամները կատարելապէս եռանկիւնաձեւ են, և վերի միջնէկներու կեղբոնական արծնիկը անհետացած է:


17 տարեկան (պատ. 20). — Եռանկրկնե-  
րուն երեք կողմն ալ իրարու հաւասար եր-  
կայնութիւն մը կ'ստանան :



Պատ. 18.—15 տարեկան. — Միջնէկները կատարելա-  
պէս եռանկրկնաձեւ են :




Պատ. 19.—16 տարեկան. — Անկրկնները եռանկիւ-  
նաձեւ են :



Պատ. 20.—17 տարեկան. — ակռաներու երեք կողմն  
ալ իրարու հաւասար՝ եռանկրկնաձեւ են :



Պատ. 21.—18 տարեկան. — Եռանկրկնին երկու կողմ-  
նակի մասերը երկարած են :



Պատ. 22.—19 տարեկան. — Հատուները տափակցած :


Այս տարիքէն վերջը՝ եռանկրկնին երկու  
կողմնակի մասերը կ'երկարին :

18 տարեկանին՝ (պատ. 21) հատուներ-  
ընեն :

19 տարեկան (պատ. 22). — Հատուները  
մէկ կողմէն դէպ ի միսը կը տափակնան :

0 տարեկանին միջնէկները միեւնոյն ձե-  
ւափոխութիւնը կը կրեն (պատ. 23) :

21 տարեկանին՝ (պատ. 24) անկրկնները :



Պատ. 23.—20 տարեկան. — Միջնէկները տափակցած :



Պատ. 24.—21 տարեկան. — անկրկնները տափակցած :

Այս տարիքէն վերջը՝ եթէ ոչ անկարելի,  
գէթ շատ դժուարին կ'ըլլայ ձիւրու տարիքը  
իրենց ակռաներէն ճանչնալ :

Բոլոր մեր այս տուած ծանօթութիւննե-  
րը կը պատշաճին միայն այն անատնոց, որ  
իրենց ակռաները բնական օրինաց համաձայն  
կանոնաւոր կերպով կը բուսնին և կ'աճին :  
Բայց որովհետեւ բնութեան մէջ զարտուղու-  
թիւններ՝ բացառութիւններ անպակաս են՝  
ինչպէս ամէն պարագայի մէջ, այնպէս ալ  
ակռաներու բուսնիլը իր բացառիկ զարտու-  
ղութիւնները կրնայ ունենալ :

Առ հասարակ, կանոնաւոր ելք ունեցող  
հերձատամ մը, պէտք է լինդէն դուրս 16  
հազարորդամեդր (միլիմեդր) երկայնութիւն  
ունենայ :

Ակռաները՝ բնական բերմամբ, մէկ տար-  
ուան մէջ 3 հազարորդամեդր երկայնու-  
թեամբ կը մաշին :

Բայց երբեմն կը պատահի որ, ակռան  
բնականէն քիչ՝ կամ շատ կը մաշի. և այս  
կերպով ալ կենդանիին տարիքը սխալ կ'են-  
թադրուի : Այսպիսի պարագայի մը մէջ, պէտք  
է նախ հերձողներու ատամնային սեղանին  
ցոյց տուած նշաններէն՝ անատնին տարիքը  
որոշել. յետոյ այդ տարիքին վրայ գումա-  
րել՝ կամ անկէ պակսեցնել այնչափ տարի,  
որչափ անգամ 3 հազ. մեդր աւելի կամ պա-  
կաս կայ՝ ակռային բնական երկայնութեան՝  
16 հազ. մեդրին վրայ :

Ձիեր կան, որոնց ակումբները սովորական են քիչ կը մաշին, որով և, իրենց ատամնային եղջերակը՝ 8 տարեկանէն վերջ, գրեթէ հաստատապէս կը մնայ՝ առանց աւելուելու: Այսպիսիները կը կոչուին «կարծրատամ» (bégus): Ուրիշներ ալ կան, որոնց ատամնային եղջերակը սովորականէն շատ աւելի խոր ըլլալով, կեդրոնական արծնիկը՝ կամ որ նոյնն է, ատամնային եղջերակի պարկատակը 12 տարեկանէն վերջը կը մնայ: Ասանք ալ կը կոչուին «կեղծ կարծրատամ» (faux bégus):

Դիտելի է նաեւ որ, Եւրոպական ձիերու զարգացած ցեղերուն վերաբերալ անհատները՝ 5 տարեկանէն շատ առաջ իրենց ատամնային կամարը կազմած կ'ըլլան, և ընդհանրապէս՝ 3 ու կէս, 4 տարեկան եղած ատանին, 5 տարեկան ձիւ մը ակումբներուն ցոյց տուած նշանները կը կրեն: Ասանք ալ կը կոչուին «կանխահաս»:

Ղ. ԲՈՂԱՏ

ԹԵՐԹՈՆ «ՀԱՆՐԱԳԻՏԱԿ»Ի

(14)

ՓԻՒՆ ԱԼԲԻՆ

## ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐԻՍ ԿԵԴՐՈՆԸ

Երկու օր յետոյ սկսած իրական եղբայրները հասած էինք, ուր միայն Բէթէրհէտի բարձունքները կը տեսնէինք. և Վալքերի դէպի Ֆէրօյէ ուղղուեցաւ, Օրքատներու Սիթլէնտներու մէջէն անցնելով:

Մեր ծիծառնաւ սկսաւ ընդհուպ ծեծուիլ Ագլանտականի կոհակներէն, որով ստիպուեցաւ մանուածապատ չըջաններ ընել հիւսիսային հովին դէմ, ու դժուարութեամբ հասաւ Ֆէրօյէ: Ամսուն Յին, նաւապետը ճանչցաւ Միկանէսը: որ այդ կղզիներուն մէջ ամենէն արեւելեանն է. այդ վարկեա-

նէն սկսած՝ Վալքերի սկսաւ ուղղակի դէպի Բօրդլէնտի հրուանդանը յառաջանալ, որ Իսլանտայի հարաւային եղբայրին վրայ կ'ընայ:

Ճամբորդութեան ատեն ո՛ր և է նշանաւոր միջադէպ չպատահեցաւ: Արիւսար կը տանէի ծովուն նեղութիւնները. մօրեղբայրս հիւանդացաւ, բան մը որ մեծ գայրոյթ ու տաթ պատճառեց իրեն:

Ուստի չկրցաւ նաւապետին հետ խօսիլ Մնէֆէլսի խնդրոյն վրայ, հաղորդակցութեան միջոցներուն, տեղափոխութեան դիւրութեանց վրայ. ստիպուեցաւ իր բացատրութիւնները յետագայէլ նաւին ժամանման օրուան: Ամիսը Ճամբորդութեան միջոցին սենեակին դուրս շերտ, այլ պառկած անցուց իր ժամանակը՝ խցիկին մէջ, որու միջնորդները նաւուն տատանումներէն կը ճարձատէին: Շիտակը կ'ուզէ՛ք, մօրեղբայրս արժանի էր այդ բաղդին ենթարկուելու:

Ամսուն 11ին Բօրդլանտի հրուանդանը հասանք. օդը պայծառ ըլլալով կրցինք նշուրել Միրտալս Եօքիւլը, որ Բօրդլանտի վրայ կը նայի: Այդ հրուանդանը՝ դերուկ զանիթափներով խոշոր սարակէ մը ձեւացած՝ միւս միմակ ցցուած է հոն ծովեզրին վրայ:

«Վալքերի»՝ արեւմտեան ծովեզրքէն բաւական հեռու՝ կը յառաջանար կէտերու և շանաճուկերու բազմաթիւ վահաններու մէջէն: Եւ ահա՛ երեւան եկաւ անծիր լուսանցիկ ժայռ մը, որուն կը բաղխէր փրփրացայտ ծովը՝ կատաղաբար: Ուէսթմանի կղզեկանները ովկէանոսէն դուրս կը ցցուէին, հեղուկ դաշտագետնին վրայ՝ ցանուած ժայռերու պէս: Այդ վայրկեանէն սկսած, «Վալքերի» ովկէանոսին բացերը տարածուեցաւ, չափաւոր հեռաւորութեամբ մը անցնելու Ռէյքանէնի հրուանդանէն, որ Իսլանտայի արեւմտեան անկիւնը կը գոցէ:

Ծովը շատ յուզուած ըլլալուն՝ մօրեղբայրս չկրցաւ վերնայարկը ելլել, հիւանալու համար հարուարեւմտեան հովէն բղկտուած ու ծեծուած ծովեզրքներուն վրայ:

Փոթորիկին սատուութեան պատճառաւ ծիծառնաւ բոլոր առագաստները պարզած կը սուրար, որով և յաջողեցաւ առանց ու և է վտանգի ազատիլ, քառսունեութ ժամ յետոյ Աքակէնի հրուանդանին արեւելակողմէն գտնուած խարսխանիչը նմարեցինք: Այս

հրուանդանի վտանգաւոր ժայռերը կը ստա-  
րածուին ծովուն կոհակներուն տակ՝ շատ  
հեռուները: Իսլանտացի նաւուղիւ մը մօտե-  
ցաւ մեզ, և երեք ժամ յետոյ «Վալքիրի»  
ֆաբրայի ծոցին մէջ, Ռէյքեաւիքի առջեւ կը  
խարսխէր:

Բրոֆէսէօրը վերջապէս դուրս ելաւ իր  
սենեակէն, քիչ մը տփուցն ու աւրուած,  
այլ միշտ խանդավառ ու աչքերուն մէջը գո-  
հունակութեան արտայայտութիւնով:

Նաւուն ժամանումը մեծապէս կը հետա-  
քըրքրէր քաղքին բնակիչները, ամէն ոք բան  
մը ունէր անոր մէջ, և այս պատճառով ժո-  
ղովուրդը քարափին վրայ կը խոնուէր:

Մօրեղբայրս փութաց իր տատանող բան-  
տէն՝ կամ եթէ կ'ուզէ՝ հիւանդանոցէն  
դուրս նետուիլ: Բայց ծիծառնաւէն դուրս  
չելած, զիս դէպ առաջ քաշեց տարաւ ան-  
գամ մը, ուրկից մատովը ցոյց տուաւ ինծի՝  
ծովախորշին հիւսիսակողմը բարձրացող եր-  
կու սրածայր կատարներով բարձր լեռ մը,  
որ կրկին կ'ոն մը կը ձեւացնէ յաւիտենական  
ձիւնով ծածկուած:

«Սնէֆէլսը, Սնէֆէլսը», գոչեց մօրեղ-  
բայրս:

Ու չարժում մը ըրաւ, որով բացարձակ  
լռութիւն կը պատուիրէր ինծի. յետոյ իրեն  
սպասող նաւակը ցատկեց, ես ալ ետեւէն.  
քիչ մը ետքը Իսլանտայի հողը ստք կը կո-  
խէինք:

Նախ բարի դէմքով ու զօրավարի համա-  
զգեստով մէկը տեսանք: Պառոն Թրամբն էր  
ան՝ Իսլանտայի կառավարիչը, որ պարզ ա-  
տենակալ մըն էր միայն: Բրոֆէսէօր Լիտէն-  
պօք խնայն ըմբռնեց թէ ինչ տեսակ մար-  
դու հետ էր իր գործը: Քորէնհակի նամակ-  
ները յանձնեց անոր, ու կարճ խօսակցութիւն  
մը ունեցաւ դանիերէն լեզուով, ուրկէ բառ  
մը չէի հասկնար: Այս առաջին այցելութիւ-  
նը սա արդիւնքը ունեցաւ որ, Պառոն Թրամբ  
ինքզինքը Բրոֆէսէօր Լիտէնպօքի տրամա-  
դրութեան տակ կը դնէր լիովին:

Մօրեղբայրս շատ սիրալիր ընդունելու-  
թիւն գտաւ նաեւ քաղաքապետ Պ. Ֆինսէնի  
կողմէ, որ կառավարիչ՝ պառոն Թրամբէն  
չառ վար չէր մնար, իր զինուորական կերպա-  
րանքով, բայց անոր չափ ալ խաղաղասէր  
մարդ մը կ'երեւար, թէ խառնուածքով և  
թէ իր կացութեամբ:

Գալով օգնական Պ. Բիքթիւրսընի, այն  
պահուն եպիսկոպոսական ուղեւորութիւն մը  
կը կատարէր հիւսիսային Պայիաթի մէջ. առ  
այժմ պէտք է յայտնին կտրէինք անոր ներ-  
կայանալու գաղափարէն: Բայց ինչ սքանչե-  
լի մարդ մըն էր սա Պ. Ֆրիտրիքսընը, Ռէյքե-  
աւիքի գովէճին Բնակ. պատմութեանց ու-  
սուցիչը, որուն օժանդակութիւնը շատ օգ-  
տակար եղաւ մեզի: Այդ համեստ գիտունը  
Իսլանտերէն ու Լատիներէն լեզուներով մի-  
այն կը խօսէր, ուստի փութաց իր ծառայու-  
թիւնները Ուրաստիոսի լեզուով մատուցանել  
ինծի, և խնայն զգացի որ իրարու համար  
ստեղծուած էինք մենք երկուքս:

Ահա՛ միակ անձնաւորութիւնը, որուն հետ  
կրցի խօսակցիլ Իսլանտա բնակած պահուս:

Այս պատուական մարդը, իր տանը երեք  
սենեակներէն երկուքը մեր տրամադրութեան  
տակ դրաւ, և փութով անոնց մէջ տեղա-  
ւորուեցանք մեր գոյքերովը, որոնց քանակը  
քիչ մը զարմանք սլառճառեց Ռէյքեաւիքի  
բնակիչներուն:

«Է՛հ ուրեմն Աքսէլ, ըսաւ մօրեղբայրս,  
գործերնիս լաւ կը քողէ, ամենէն դժուարի-  
նը ի գլուխ ելած է արդէն:

— Ի՞նչպէս, ամենէն դժուարինը, գո-  
չեցիր:

— Անտարակոյս, խնդիրը կղզին ելել էր.  
հիմա ալ պիտի իջնանք:

— Է՛հ, եթէ այդպէս կը մտածէք, իրա-  
ւունք ունիք, բայց իջնելէն վերջն ալ, նորէն  
վեր պիտի ելլանք, կարծեմ:


— Օ՛հ, ատոր վրայ ամենեւին չեմ մտա-  
ծեր: Օ՛ն ատեն կորսնցնելու չէ: Ես քիչ մը  
մատենադարանը պիտի այցելեմ, թերեւս  
Սաքսիւսէմի մէկ քանի ձեռագիրները գըտ-  
նուին հո՛ն. որչա՛փ լաւ պիտի ըլլայ եթէ  
գտնեմ, և կարենամ խորհուրդ մը առնել  
անոնցմէ:

(Շարունակ)

#### Վ Ի Դ Ա Կ

Ներկայ թւոյս տաշնորդող յօդուածի  
մէջ, «Անդրէաս Վ. Անդրէասեան»ը, պէտք  
է կարդալ «Աղէքսանդրեան»: Նոյնպէս Հ.  
Ռափայէլ «Խապէրտեան»ը՝ «Միասէրեան»:

Արտօնատէր Ա. ԼՈՒՍԻՆԵԱՆ



Կ. ԵՍՎՐՈՒԵԱՆ ԵՒ Յ. ԻՍԱԳՈՒՎԵԱՆ  
ԹԷՅԻ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Չինական, Հնդկական և Ճապոնական  
ամենաընտիր տեսակէ եղող արտագրու-  
թիւնները պիտի գտնէք ապահովաբար  
վերոյիշեալ պատուաւոր վաճառատան  
մէջ անհամեմատ աժանութեամբ:

Գաւառներու համար, յանձնարարու-  
թիւնները փութով և ճշգիւ կը կատա-  
րուին:

Կեդրոնատեղին է, Կ. Պոլիս, ձեւալ  
Պէյ խանի տակ, թիւ 10. սոյն վաճա-  
ռատան ապրանքները ժողովուրդէն զը-  
նահատուած ըլլալով, շատեր անոնց  
կեղծը հրապարակ հանած են. ուստի  
զգուշանալու համար, վերոյիշեալ վա-  
ճառանիշին տակ Կ. Եսվրուեան և Յ.  
Իսագուլեան ստորագրութիւնը փնտռե-  
ցէք:

ՄԵԾ ՍԹԵՐԱՆՈՅ ԴԷՂՈՐԷԻՅ

Լ. ԱՐՍՒԱՆԵԱՆ ԵՒ Ս. ԷՄԻՐՁԷ

Կ. ՊՈԼԻՍ, ՖԵՏԻԼԵԱՆ ԽԱՆԻ ՏԱԿ

Սոյն վաճառատուն պատրաստ է մատա-  
կարարել մեծ ու փոքր քանակութեամբ,  
ամեն տեսակ թարմ դեղորայք. վիրա-  
բուժական դործիներ, Անգղիական և  
Գաղղ. պատրաստ դեղեր, զօնեակներ,  
գինիներ և հանքային ջուրերու մեծ  
վերք մը յարմար գներով: Լ. Արսլան-  
եան և Ս. Էմիրզէ Ընկերութիւնը երկար  
ատեն անձնական փորձառութիւններ

ունին: Ամեն ջանք և աշխատութիւն չեն  
խնայեր իրենց յաճախողներն գոհացը-  
նելու համար, մասնաւոր ուշադրութիւնը  
կը հրաւիրենք գաւառաց համար, որոնց  
կը շրկուին դեղորայք, ամենայն արագու-  
թեամբ, թարմ և մատչելի գներով:

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԹԵՐԹԵՐ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄՕՄՈՒԼ. 29րդ Տարի, Կիսամութիւն  
ազգային, Կրական և ֆաղաքական: Խմբագիր. Տնօրէն  
Մ. Մամուրեան: Տարեկան կանխիկ 80 դրշ կամ 17  
Ֆրանք, Ուսուցիչներու համար 60 դրշ կամ 13 Ֆրե-  
Հասցէ՝ Մ. Մամուրեան, Իզմիր:

ԲԱԶՄԱՎԵՊ — 57րդ տարի, ամսաթերթ, Հայ մատե-  
նագրական, ստուգաբանական, պատմական, քերական-  
ական, աշխարհագրական, հնախօսական, և ընդ. Տա-  
րեկան կանխիկ, 10 Ֆրանք:

Հասցէ՝ Rédaction de la Revue "Bazmavap",  
St. Lazare Venise (Italie)

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՈՐԵԱՅ — 13րդ տարի. ամսաթերթ.  
Հայ. գրական յօդուածներէն զատ ճշտիւ տեղեկութիւն  
կուտայ Հայ. գրականութեան, Պատմութեան և ընդ. Ի  
նկատմամբ, ամէն ամիս նոր հրատարակութեանց վը-  
րայ և ընդ. Տարեկան կանխիկ 10 Ֆրանք:

à la Rédaction de la Revue "Hantess",

VII<sup>e</sup> 2 Mechitharistengasse 4.  
Vienne (Autriche)

ՄԵՐ ՀԱՍՑԷՆ

Ի դիմաց ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ Կ'ստորագրէ մի  
միայն Տնօրէն-Խմբագրապետ Ղ. ԲՈԼԱՏ,  
որու դիմել պէտք է, առանց բացառութեան,  
թերթիս վերաբերեալ ամէն գործառնու-  
թեանց համար:

درعالمیه ده بعه قوسنده اسکی ضبطیه ده  
۱۹ نومرولی دکانه «مجموعه علوم» غرضیه  
سر محرری (بولاد) افندی به

Ղ. Բոլատ Տնօրէն-Խմբագրապետ

«ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ»

19. Էսկի-Զապթիյէ, Պաղչէ-Գափու  
Ս/թամպօլ

H. Polad Rédacteur en chef du journal  
"HANRAKIDAK",

19. Rue Eski-Zabtié Bahdjé. Kapou. 19  
Stamboul

## ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ԾԱՆՈՒՅՈՒՄՆԵՐԸ

Հանրագիտակ կը հրատարակուի առ այժմ չաբաթը անգամ մը. իր նպատակն է գիտութիւնները ռամկացնել, եւրոպական արհեստներու, արուեստներու, ճարտարարուեստներու, երկրագործութեան ելն. գրութիւններն ու նորութիւնները ծանօթացնել գործնական բացատրութիւններով:

Հանրագիտակ՝ իր յառաջգիմութիւնը ժողովուրդին յառաջգիմութեան մէջ, իր իսկական շահը՝ հանրութեան մէջ փնտռել՝ իրեն միակ նպատակ ըրած ըլլալուն, հաստատած է հարց-պատասխանիի գրութիւն մը, որու օգտակարութիւնը փորձով հաստատած են մեր յարգոյ բաժանորդները:

Հանրագիտակ կը պատասխանէ գըլխաւորաբար այն ամէն օգտակար հարցումներու, որոնք կը վերաբերին երկրագործութեան, Անասնաբուծութեան, Արհեստագիտութեան, ճարտարարուեստի, Առտնին անտեսութեան և իրենց յարակից ճիւղերուն:

Եթէ տրուելիք պատասխանները թերթիս պարունակութեանց մաս կաղմեն, որոցմէ հանրութիւնը և երկիրը կրնայ օգտուիլ, խմբագրութիւնս ո և է փոխարինութիւն չի պահանջեր:

Ուղղուած հարցումներու մէջէն, ամենէն առաջ կը պատասխանուի անոր, որ հանրային շահուն հետ անմիջական կապակցութիւն ունի. մնացեալներուն կը պատասխանուի յարմարագոյն առթիւ:

Կը պատասխանուի մի միայն այն հարցումներուն, որոնք կ'ուղղուին Հանրագիտակի Պատ. բաժանորդներու կողմէ:

Տրուած պատասխանները շահեկան և օգտակար կերպով ներկայացնելու համար, ուղղուած հարցումներու կարե-

ւորներուն մանրամասն և գործնական բացատրութիւններ կը տրուին, որ կըրնայ երբեմն յապաղում պատճառել, բայց վերջապէս ուշ կամ կանուխ կը պատասխանուի: Այս պատճառաւ պէտք է մենէ անմիջական պատասխան խընդրել:

Անոնք որ իրենց զբաղումին վերաբերեալ ո և է հարցում կ'ուղղեն խմբագրութեանս, և կ'ուղեն պատասխանը միայն իրենց վերապահել, պէտք է մասնաւոր սակարկութեամբ, և հարցումի կարեւորութեան համեմատ վճարում մ'ընեն:

Եթէ պատահի հարցում մը, որ թերթիս ծրագրէն դուրս ըլլայ, և պատասխանը ստանալու համար մասնագէտներու կարծիքին պէտքն զգացուի, ծախքը՝ և այդ մասնագէտներու պահանջած փոխարինութիւնը պէտք է ընէ՝ հարցատէրը:

Հանրագիտակ կ'ընդունի այն ամէն անձանց պատասխանութիւնը, որոնք թերթիս տղորթեան համաձայն հանրօգտութեան համար կը զրկեն:

Իր պատասխաններուն կը նուիրէ առ այժմ թերթ մը: Թերթին յառաջգիմութեան հետ մտադիր է նաեւ դրամական փոխարինութիւն ընել ապագային:

Հանրագիտակ իր բաժանորդներու կողմէ եղած յանձնարարութիւնները կը կատարէ. եթէ փոխարժէքը կանխա՝ յանձնարարութեան հետ զրկուի:

Հանրագիտակ կ'ընդունի ամէն տեսակ ծանուցումներ և ազդարարութիւններ, խիստ դիւրամասջելի պայմաններով: